

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱԹՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
ԱՔՔԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՄ (1263 թ.)

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Երկարատև տարածաչնություններից ու վեճերից հետո տիեզերական եկեղեցու շրջանակներում ձևավորվել էին մի շարք ինքնամփոփ նվիրապետություններ, որոնք հարաբերակցվում էին ոչ թե ուղղահայաց, այլ հորիզոնական կապերով: Յուրաքանչյուր եկեղեցական կառույց ստեղծել էր իր ուղղահայաց ինն աստիճանի համակարգը ու հենվում էր սևփական ծիսադասանանքի և տեղագրական կազմակերպման վրա, ուստի նրանց հիմնախնդիր էր ցույց տալ որդեգրած դավանանքի ուղղափառությունը, համընդհանրակառուցվածությունը և առաքելականությունը: Ինքնամփոփ եկեղեցական համակարգ՝ ձևավորմանը զուգահեռ շարունակվում էր նաև հակառակ գործընթացը, երբ անընդհատ փորձեր էին արվում սլահայանելու նրա միասնականությունը և ամբողջականությունը:

Ճի՛յ դարի 11 կեսին միջեկեղեցական շրջանակներում շոշափմող կարևորագույն հիմնախնդիրներից էր տիեզերական եկեղեցու միասնությունը հարցը, որը կազմում էր հալ-հոտմեական եկեղեցական փոխհարաբերությունների հիմնական բովանդակությունը: Ինչո՞ր առարկա ժամանակաշրջանում միասնություն կարելի էր հասնել միայն որևէ աթոռի կանոնական գերագահության պայմաններում, քանզի ձևավորված դավանարանական միասնություն համարյա անհնար էր սարձնում ընդհանրությունն ալ ձև: Ի՞նչ փորձերը հանրագումարի բեռնի միասնության դադարափարի ժամանակի ընկալումը, ապա նրա դրսևորման հնարավոր շոջանակները աղբուրում էին երկու՝ կանոնական և ծիսադասանական միասնության հետ: Մեղ հետաքրքրող ժամանակահատվածում միասնության դադարափարի և քաղաքականության հիմնական կրողը ռեռևս իր վարչարման բարձրակետին գտնվող պապականությունն էր, որն աշխատում էր իրեն ենթարկել մյուս աթոռները, բայց ալում էլ նվիրապետություն կունենար միակենտրոն ուղղահայաց ձև: Այս գաղափարը, որ հոտմեական եկեղեցին լուրտողն էր մատուց, հանդրմանում էր երկու հիմնական սկզբունքի մաս: Ե) Հին աշխարհի միասնության կրողը Հոտմն էր, որը ժառանգել էր քրիստոնյա Հոտմը:


բ) Հոտմեանն եկեղեցու ազդեցությունը քրիստոնյա աշխարհում նույնպես համընդհանրական պետք է լիներ, ինչպես կայսրության ազդեցությունը:

Պապականության մարած օտոտականությունը, մասնավորապես իտալական առաջնությունները, ակտիվորոեղեն հալ-հոտմեական միջեկեղեցական հարաբերությունները, բոտնը XIII դարի ետկրոտ կեսին թևակոխեցին նոր փուլ: Մոնոտական արյամանոները Մերձավոր Արևելքը, Իգիպոտոս հոտարումը և տաինական կայսրության կործանումը (1261), իսպալրաց տիրույթներն անկումն արմատապես փոխեցին պապականության տրեելյան քաղաքականության բնույթն ու նպատակամիտվածությունը: Ռազմական արշավանքն փոխարեն սկսեցին առավել ուշադրություն դարձնել քաղաքական իսպալրությունները, ուստի սրտահայան էր, որ ռազմական միասնությունների փոխարեն Արևելքում լայն գործունեություն ծավալեցին «մուրացիկ» միաբանությունների քաղաքականությունը: Այս պայմաններում փոխվեց նաև հայոց եկեղեցու տեղն ու դերը պապականության արևելյան քաղաքականության հա-

մակարգում: Եթև փորձենք հանրագումարի բերել պապականության հետաքրքրությունների շրջանակները, այս կարելի է առանձնացնել:

ա) Խաչակրաց տիրույթները պահպանելու համար պապականությունը աշխատում էր համատեղել Կիլիկյան Հայաստանի և խաչակիրների ռազմաքաղաքական ուժերը: Եգիպտոսի սուլթանության հզորացումը, մասնավորապես, երբ նա կարողացավ 1260 թ. պարտության մատնել մոնղոլներին, կտրուկ փոխեց ռազմաքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում: «Ասորիքի և Պաղեստինի ֆրանկների դրությունը կտրուկ վատացավ: Այժմ արդեն Արևելքում նրանց հարևաններն էին ոչ թե Դամասկոսի, Հայեպի, Հոմսայի և Բարիշ փոքր մուսուլմանական պետությունների թույլ մելիքները, էմիրները, աթաբեկները, ոչլ Եգիպտոսի»¹: Պարտության մատնելով մոնղոլա-հայկական զինակցությանը, Եգիպտոսի սուլթանությունը նախապատրաստվում էր խաչակիրների դեմ լայնածավալ պատերազմի:

բ) Արևելքում կաթողիկոսություն տարածելու համար Կիլիկիան պետք է դառնար քարոզչության կաղամկերպման տարածքային կենտրոն: Ինչ մնում էր Կիլիկյան Հայաստանին, ապա այն աշխատում էր մոնղոլներին ու Արևմուտքի ռազմաքաղաքական օգնությամբ երկիրը պերժ պահել Եգիպտոսի և Իկոնիայի սուլթանության հարձակումներից: Առանձնացնենք, որ դավանաբանական տարբեր համակարգեր ունեցող Կիլիկյան Հայաստանի և պապականության ղրվանագիտական հարաբերությունները շաղախվում էին կրոնական խնդիրներով, որոնց արժարժումը ևրբեմն այնքան արտահայտիչ էր դառնում, որ թվում էր, թև կողմերը մոռացել են իրենց հետաքրքրող խնդիրները: Այս պատճառով ղրվանագիտական հարաբերություններին մասնակցում էին աշխարհիկ և սրբազան իշխանությունները, սակայն խնդիրն այն է, որ Սսի և Հոռմկլաի արքունիքները օժտված էին տարբեր իրավահավասարություններով ու հետապնդում էին տարբերույթ նպատակներ: «Հայոց թագավոր» տիտղոսը, անկախ այն հանգամանքից, թե ինչ, նկատառումներով էր տեղափոխվել ժամանակի և տարածության մեջ, ամենայայն ընկալման դեպքում որսևտրվում էր միայն Կիլիկյան Հայաստանում ձևավորված քաղաքական և եկեղեցական կառույցի միջոցով: «Հայոց կաթողիկոս» տիտղոսը ներառում էր քաղաքական տարբեր միջավայրեր, այդ թվում նաև Կիլիկյան Հայաստանը ներկայացող հայ բնակչությանը, ըստ այդմ էլ նրանց շահերն ու հետաքրքրությունները միշտ չէ, որ համընկնում էին: Երկու տիտղոսների կիրառումը պարզորոշ վկայում է նաև քաղաքացիական և եկեղեցական իշխանությունների ինքնորոշման և առանձնացման ձգտումների մասին. «...ի հարապետութեանն տեառն Յակովբայ Հայոց կաթողիկոսի, և ի թագաւորութեանն Հեթմոյ Հայոց թագաւորի»²: Հարցն ամբողջության մեջ պատկերադնելու համար ներկայացնենք միայն նրանց տեղագրական կաղամկերպման ձևերը.




¹ После Марко Поло, путешествия западных чужеземцев в страны трех Индий. Перевод с латинского и старонитальянского языков. Введение и примечания Я. М. Света. М., 1968, с. 28.

² Հայոցն ձեռագրերի շխտակարաններ, ժԳ դար. կաղմեց Ա. Ս. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 407.

Այս բնագծանուր կառույցում մենք հաշվի չենք առել այն հանգամանքը, որ համակարգի ներսում ձևավորվել էին մի շարք աթոռներ (Աղվանք, Աղթամար), որոնք ևս յուրացրել էին ինքնամփոփության որոշ հատկանիշներ: Հասկանալի է, որ հայոց կաթողիկոսության իրավասություններն անհրաժեշտաբար գրսելորվում էին այս կառույցի շրջանակներում, ըստ այդմ էլ ձևավորվել էր հայոց եկեղեցու տեղագրական կազմակերպման նոր տիպ, որը տարբերվում էր նախորդից: Կարծում ենք սլատահական չէ, որ խնդրո առաքկա ժամանակաշրջանում «Հայոց կաթողիկոս» տիտղոսին զուգահեռ հրապարակ են գալիս այլևայլ տիտղոսաձևեր. «Արդ, գրեցաւ սա ի թվիս Հայոց ՁԺԷ (1268), ի թագաւորութեանն Հեթմոյ բարեպաշտի, ի դիղապետութեանն տեառն Յակոբայ, որ յայսմ ամի կարգեցաւ առաջնորդ սուրբ եկեղեցոյ Հայկազեան բրիստոնէիցըս և յաջորդ աթոռոյ Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի...»³: Այս երևույթի արձագանքները իրենց գաղափարական հիմնավորումն են գտնում «Գաղանց թուղթ» վերտառութեամբ հայտնի ստեղծագործության մեջ. «Եւ զի պատրիարքարանքն երեբին նրուսաղեմայ Անտիոքայ և Աղեքսանդրոյ յորժամ զպատրիարք ձեռնադրիցեն համահաճութեամբ և ընտրութեամբ հայոց հայրապետին արասցեն. և որոք նստցի յաթոռ հայրապետութեան զգաւանութիւն հաւատոյց զոր պարտէր ինձ Սեղբեստրոսիս և յաջորդաց իմոց ծանուցանի, ընտնն հայոց հայրապետին ծանուցէ զի նա կարգեցի ինձ փոխանորդ՝ հրամանահան ի վերայ ամենից արևելականացն գաւառաց»⁴: Նմանատիպ գաղափարներն հրապարակ գալու զաղտնիքը պայմանավորված էր քաղաքական տարաբնույթ միջավայրերի հարուստ հնարավորություններով:

«Հայոց թագավոր» տիտղոսի իրավասությունները հանգրվանում էին պետության վարչաքաղաքական համակարգում.



Մենք այստեղ հաշվի չենք առել այն հանգամանքը, որ Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ իշխանությունը մշտապես ձգտում էր վերահսկողություն սահմանել կաթողիկոսարանի գործունեության վրա, ըստ այդմ էլ հնարավորին յափ այն ներառել պետության քաղաքական համակարգի շրջանակներում, որպեսզի իր իշխանութեամբ ամրապնդի եկեղեցական կարգերը:

Առաջին կառույցում գլխավորը ոչ թե այն հանգամանքն է, թե ինչ բնույթ են կրում օտարաքական կարգերը, ուր սուկա է հայոց եկեղեցին, այլ քաղաքական իշխանության բազմակենտրոնությունը, որն այս կամ այն ձևով ազդում էր կաթողիկոսարանի գործունեության վրա: Առաջին դեպքում միասնությունը կարող է դրսևորվել էթնո-դավանաբանական միջավայրի մեջոցով. իսկ ետևորոշում՝ էթնո-օտարաքական և դավանաբանական: Քաղաքական համոզմունքները կառույցի բաղակալության պայմաններում հայոց կաթողիկոսության համար առանձնակի նշանակություն էր ստանում էթնո-դավանաբանական մեջոմարի միասնությունը պահպանելու հիմնախնդիրը, մինչդեռ երկրորդը սեպարատիստիկում էր տեսակետության գրտատեղումը:

1263 թ. Ուրբանոս Գ ատաի (1261—1264) նվիրակի՝ Տյուրոսի արքեպիսկոպոս Գուսիերոս Բ-ի նախաձեռնութեամբ խաչակիրների մայրաքաղաք Ար.

³ Նույն տեղում, էջ 364:
⁴ Թուղթ սիրոյ և միաբանութեան Մեծի Կայսերն Կոստանդիանոսի և սրբոյն Սեղբեստրոսի վեհադոնի փափին և Տրդատայ հայոց արքայի և սրբոյ Գրիգորի հայոց Լուսաւորչին, Վեներտիկ, 1695, էջ 24:

բայում ժողով է հրավիրվում: «Հայոց և Լատինաց դաւանութեան միութեան կամ տարբերութեան վրայ խօսելու»⁵: Ժողովին մասնակցում էին Աքքայի քաղաքագլուխը, տաճարականների հոգևոր-աւսպետական միաբանության մեծ մագիստրոսը, հիվանդախնամների ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարը, ծովեզերքի խաչակիր տիրակալները, բացի Անտիոքի իշխանից, Կիպրոսի հոգևոր առաջնորդը և այլք: Աքքա են մեկնում երկու պատվիրակություն, որոնցից մեկը Հեթում 1 թագավորի (1226—1270) հանձնարարականներով, մյուսը՝ Կոստանդին Ս. Բարձրաբերդցի կաթողիկոսը (1221—1267): Այստեղից կարելի է եզրակացնել, որ պապականությունը նպատակ ուներ ժողովում քննարկել երկու խումբ՝ հիմնախնդիրներ՝ ռազմաքաղաքական և եկեղեցական. «...ոչ գիտեմք զպատճառ ժողովոյն՝ թէ վասն մեր էր և իւրայլ պէտս: Եւ ասեմ, զի՞արգ կարացից ընդ ազգի միոյ ողջոյն առնել պատասխանի, մանաւանդ եթէ վասն եկեղեցւոյ է խնդիրն...»⁶: Առանձնացնենք նաև, որ Տյուրոսի արքեպիսկոպոսի պատգամաբերները հայոց կաթողիկոսի մոտ բավական սառն ընդունելության են արժանանում: Որոշ տվյալներ թույլ են տալիս եզրակացնել, որ կաթողիկոսարանը պատվիրակություն է ուղարկել Հեթում թագավորի նախաձեռնությամբ. «...իկաթն յոյժ մեղադրել էր կաթողիկոսին մերոյ՝ որպէս տմարդոյ, զի եթէ ոչ, ասէ վասն օտարասիրութեան սակայն վասն բնական հարկին զոր ունի ի Հռովմայ եկեղեցւոյն, պարտ է տեսանել զմեզ...»⁷: Կաթողիկոսության պատվիրակության կազմում էր նաև սամանակի նշանավոր վարդապետներից Մխիթար Սկեռացին (Տաշրացի). «Եւ շրամայեաց կաթողիկոսն ինձ գնալ՝ և իմ թէպէտ և տկար գոլով և պատրաստ ի բան, սակայն յանձն առի զընթացսն. միայն զայս ետու պատուէր վասն գրեկոցն՝ զի հնազանդութեան անուն բնաւ մի յիշեսցի, զի արք ձարտասանք են և որսորդք բանի, բայց զհակառակն էին գրել...»⁸: Պատվիրակության նախնական դիրքորոշումը բանակցություններում հղիվող հիմնախնդիրների նկատմամբ արդեն իսկ վկայում է կաթողիկոսարանի վերաբերմունքի մասին, քանզի հռոմեական եկեղեցու գահերեցության հարցադրումը նոր շէր և վաղուց ի վեր շոշափվում էր միջեկեղեցական փոխհարաբերություններում⁹: Ամենայն հավանականությամբ Հռոմկլայի պատվիրակությունը գրել-խավորում էր Երուսաղեմի Հակոբ եպիսկոպոսը. «...հազիւ հասանք մերձ ի յեւն դեկտեմբերի ամսոյ ի քաղաքն Աքքայի ընդ մեզ ունելով՝ հրամանաւ կաթողիկոսին մերոյ՝ զեպիսկոպոսն Երուսաղեմի զմերասեռ, դտեալ ի Տրայիանուպօլիս»¹⁰:

Ժողովում քննարկվող կարևորագույն հիմնախնդիրներից էր տիեզերական նվիրապետության կառուցում աթոռների զբաղեցրած տեղի և դերի հարցը, որը պատահական չէր, քանզի խնդրո առարկա ժամանակահատվածում եկեղեցու միասնության համար պապականության վարած քաղաքականության մեջ շեշտը դրվում էր ոչ այնքան դավանաբանական տարածայնություններ՝ հարթեցման, որքան մյուս աթոռներն իրեն ենթարկելու վրա: Այս դեպքում հռոմեական եկեղեցու գահերեցությունը առաջին հերթին աշխատում էին հիմնավորել նրանով, որ պապական աթոռը հիմնարկել է Պետրոս առաքյալը, որին Քրիստոսը նշանակել էր առաքյանների գլխավոր և հանձնել եկեղեցու

⁵ Ղ. Ալիշան. Սիսուան, Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեոն Մեծագործ. Վենետիկ, 1885, էջ 101: Հմմտ. Հայագատում. Ա. Պատմիչը Հայոց, Վենետիկ, 1901, էջ 104:

⁶ Recueil des historiens des Croisades. Documentes armeniens, t. I, Paris, 1869, p. 695—696.

⁷ Նույն տեղում, էջ 692:


⁸ Պատասխանիք Մխիթարայ բահանայի Սկեռացւոյ, Յաղագս համապատուութեան երկրտասան Առանելոց. Յերուսաղէմ, 1865, էջ 8—9:

⁹ Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 2268, էջ 59ա:

¹⁰ Documentes armeniens, t. I, p. 693.

բարձրագույն իշխանությունը. «...Ընդ Պետրոս միայն ասաց Տէրն, «Ի՞նչ ես
չէմ, - և ի վերայ այս վիմի շինեցից զեկեղեցի իմ»,

«...Ընդ Պետրոս միայն ասաց Քրիստոս՝ թէ՛ «Տաց քեզ զփականս արքա-
յութեան երկնից և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յեր-
կինս և զոր արձակիցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս»¹¹: Ինչպես պարզ
երևում է, խոսքը վերաբերում է տիեզերական եկեղեցու կանոնական և դա-
վանաբանական կազմակերպման սկզբունքին: Կաթոլիկ եկեղեցու ներկայա-
ցուցիչների կարծիքով այն պետք է ունենար միակենտրոն ուղղաֆակցաց ձև,
որը ներառող բոլոր համակարգերը ենթարկվելու էին Հռոմի պապին. «...ասվ
լինեալն՝ ոչ խնդրեմք ի ձէնջ հնազանդութիւն որպէս ծառայից առ տէր, այլ
որպէս որդոյ առ հայր»¹²: Կաթոլիկոսարանի պատվիրակությունը աշխատում
էր ապացուցել, որ տիեզերական եկեղեցին Տիրոջից ծառանգել է հորիզոնա-
կան կառույցի ձև, «Արդ՝ ընկալեալ երկոտասանիցն զկատարեալ իշխանու-
թիւնս զայսոսիկ ի Քրիստոսէ՝ և ոչ ի Պետրոսէ, և սփռեալք յիշխանու-
թիւնս զաստատեցին աթոռս ինքեանց, անշարժ ի դրանց դժոխոց ըստ բա-
նին Տեառն. և բաշխեցին զիշխանութիւնս զայս աշակերտելոցն ձրի»¹³: Այս
դեպքում «զկատարեալ իշխանութիւն» հասկացությունը բովանդակում է հո-
գևոր: իշխանությանը յուրահատուկ հատկանիշների ամբողջությունը, ըստ
այդմ էլ տիեզերական եկեղեցին պետք է ունենար հորիզոնական կառույցի ձև.



Արժարժվող որոշ հարցադրումներ հիմք են տալիս եզրակացնելու, որ պա-
պականությունը, փաստորեն, չէր բավարարում միայն հոգևոր առաջնություն
ձանաչումը (դավանաբանական գերագահություն), նա ձգտում էր նաև եկեղե-
ցաբաղադրական տիրականության (կանոնական գերագահություն): Գաղափա-
րական պայքարում հայոց եկեղեցաբաղադրական շրջանակները փորձում էին
լուծել միմյանց հետ փոխկապակցված երեք հիմնախնդիր. որդեգրած դավա-
նանքի ուղղափառությունը, կանոնական ինքնամփոփությունը և առաքելա-
կանությունը. «Ու պատասխանի ետու առ այս, հնազանդութիւն՝ ոչ կարեմք
առնուլ յանձն՝ որպէս յԱստուծոյ պարգևեալ մեզ ապատութիւն հաւասար ձեզ
ըստ երկոտասանիցն, զի հնազանդութիւն ծառայական է և աշխարհական՝ և
ոչ առաքելական»¹⁴: Ժողովում քննարկվող կարևորագույն հիմնախնդիրն
փաստորեն, այս կամ այն ձևով աղերսվում էին առաքելական տեսության
ավանդույթի հետ: Հայոց եկեղեցին պաշտպանում էր տասներկու առաքյալ-
ների իրավահավասարության գաղափարը, որից էլ բխում էր նրանց հիմնա-
դրած աթոռների համապատվության սկզբունքը. «...զի գրեալ են, թե Հռոմայ
աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի՝ կապելոյ և արձակելոյ. և
ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք: Այս այն ղինչ՝ քան թէ ամե-
նայն առաքեալքն ունէին իշխանութիւն կապելոյ և արձակելոյ. և յերկոտասան
աթոռոցն զմիին ետ Պետրոսի. երեք առաքեալքն երկոտասանիցն. և երեք յե-
թանասնիցն ի Հայք կայ. և դոքայ ասեն ամբարտաւան բարձրայօնութեամբ.

11 Մ խ ի թ ա ռ Ս կ ն ա ս Յ ի, էջ 27, 32:
12 Նույն տեղում, էջ 20:
13 Նույն տեղում, էջ 37:
14 Նույն տեղում, էջ 20:

խէ կապեմք զՀայք... և մենք վասն դաշանց ուխտի հարցն մերոյ դոցա շարին հաւատացեալ և զսխալն ողջացոցան եմք»¹⁵։ Փաստորեն առաքելականութիւնը բացի եկեղեցական ավանդույթ լինելուց, ստացել էր քաղաքական որոշակի իմաստ և դարձել գահերեցութիւնը փաստարկող հիմնական հատկանիշները սեկը։ Պատահական չէ, որ դեռևս 1447 թ. Կոստանդին կաթողիկոսի նախաձեռնութեամբ և Հեթում թագավորի օժանդակութեամբ վերականգնվում է Քաղեոս առաքյալի անունը կրող թեմը։ «Եւ ի գալ ամին երկրորդի, յորժամ Ո՛հջ էր թուականս Հայոց, առաքինի կաթողիկոսն Կոստանդին առաքէ եկեղեցեացն Երևելից բնծայս՝ մետաքսառէջս ի կերպասուց պէսպէս գունովս, և մեծագրս և աստուարս ի սպաս պատարագին սրբոյ ի ձեռն Քէոզոսի սպասաւորի իւրոյ՝ ի պատուաւոր վանորայս, և շրջաբերական նամակ շիրմի առաքելոյն Քաղեոս, տալ նաւ վիճակ զշրջակայ գաւառսն և զքաղաքսն և ոսկի յովով ի շինութիւն գաւթին...»¹⁶։ «...զըջակայ գաւառսն և զքաղաքսն» տեղագրական հասկացութիւնից պարզորոշ երևում է, որ Արտազի առաքելական թեմը ստացել էր «առքեպիսկոպոսութեան» աստիճան և մի քանի տասնյակ տարի անց դառնալու էր հայոց եկեղեցու նշանավոր աթոռներից մեկը։ Արտազի թեմի վերահիմնարկումը եկեղեցաքաղաքական կարևոր նշանակութիւն ուներ, քանզի պետք է իրավական բնույթ տար Քաղեոս առաքյալի հայկական միջավայրում ձևավորված ավանդույթին։ Ավելորդ չենք համարում նշել, որ ավանդույթի շրջանակներում մշտապես շեշտվում էր ժառանգականութիւնը որպէս այն պահանջներու և փոխանցելու սկզբունք։ «...Եթէ ազգն հայոց էին այնքիկ, որք վիճակ հասին Քաղէոսի և Բարգուղիմեոսի և սրբոյն Գրիգորի»¹⁷։

Հայկական միջավայրում ձևավորված ավանդույթի մյուս կարևոր հատկանիշն այն է, որ առաքյալներից ժառանգած իրավասութիւնները կրողը ոչ սխալն նրանց հիմնադրած աթոռն էր, այլև հայոց եկեղեցին։ «...երեք առաքելքն երկոստասնիցն (իմա Հուդա-Քաղեոս, Բարգուղիմեոս, Սիմոն կամ Շնավոն) և երեք յեթանասնիցն (իմա Քաղեոս, Եվստաթեոս, Եղիշե) ի Հայք կայ»։ Այս դեպքում խոսքը գնում է ինքնամիտքի նվիրապետութեան սկզբնավորման և կազմավորման երկու սկզբունքի մասին։ Հայոց եկեղեցու պիւրքորոշումն առաջին հերթին ելնում էր այն բանից, որ պատրիարքական աթոռների, մասնավորապէս Հռոմի գահերեցութեան համար բավարար չէր առաքելական ավանդույթի հեղինակութիւնը, քանզի նման հեղինակութեամբ օժտված էր նաև հայոց եկեղեցին։ Աթոռների գերագահութեան հետ կապված հաջորդ հարցադրումն աղերսվում էր Ավետարանիչների անվան հետ։ «Յոյնք շորս ասնն նախաթոս, զԿոստանդինուպոլիս, զԱնտիոք, և զԱղեքսանդրիա և զԵրուսաղէս, մինչ աննախանձք էին. և ըստ աթոռոցն ի շորս բաժանեն զբոլոր տիեզերս։ Իսկ Հռովմայեցիք, թէև Յոյնք տան զայս իշխանութիւն, ոչ առնում յանձն զստութիւնն, այլ ըստ ճշմարտութեանն առաքելական կոչէն զինքեանս աթոռ»¹⁸։ Չորսի գաղափարը հանգրվանում էր Ավետարանիչների հիմնարկած շորս աթոռների ավանդույթի վրա, և վերածվել էր գահերեցութիւնը հիմնավորող հատկանիշներից մեկի։ Աթոռների տեղագրական թվարկումից է։ «...իսկ Հռովմայեցիք, թէև Յոյնք տան զայս իշխանութիւն» հատմածից պարզ երևում է, որ հունական եկեղեցու դիրքորոշումը իր մեջ ներառում էր միայն Արևելքի եկեղեցին, որն ամբողջովին պետք է ենթարկվեր Կոստանդնուպոլսի պատրիարքութեանը։ Այս մասին բավական հետաքրքիր է ներսես Լամբրոնացու մեկնութիւնը։ «Եւ վասն զի նախ Մատթեոս գրեաց յԱնտիոք, պատրիարքն Անտիոքու զնախապատուութիւն ունի քան զայլսն. իսկ յետ նորա Մարկոս զԱղեքսանդրիայ, յաջորդ նորա պատրիարքն յետ սո-

15 ՄՄ, ձև. 2208, էջ 59ա—59բ, Հմմտ. Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 503—504։


16 Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ Ե Յ ի. Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 311։

17 Նույն տեղում, էջ 359։

18 Մ խ ի թ ա ր Ա կ Կ և ա թ ի, էջ 70—71։

ուս դասակարգեցաւ. և Ղուկաս ի Հոռովմ գրեց, որ Հոռովայն է՝ ըստ կարգի ներքորդ էր պատուով, թէպէտ և զօրութեամբ առաջին. այլ Յովհաննէս չուսկ յետոյ յնփեսոսս գրեաց. որ նորայն եղև պատրիարգ, վերջին էր աթոռով քան զերիսն»¹⁹: Պատրիարքական աթոռների նմանատիպ դասակարգումն ըստ աստիճանների պատահական շէր, քանզի հայ իրականության մեջ ձևավորվել էին որոշակի տրամադրություններ Հայոց կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքության վերանվանելու շուրջ. «...բայց մեզ՝ Արևելից կողմանցս ոչ ինչ ի վեր բերեալ ծանուցանէր. այլ միայն այսքան համբաւէր թէ՛ խնդրեմք Անտիոքու աթոռն մեզ լինել...»²⁰: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Եփեսոսի աթոռը դասաշարում զբաղեցնում է վերջին տեղը, հասկանալի է դառնում այս համատեքստում. «Յուստիանոս կայսրն կամեցաւ ի յիր աւուրքն զՅովհաննէս աւետարանչին զմեծ պատրիարքութեան աթոռն ի յնփեսոսէ ի Չոստանդինուպոլիս փոխել եւ անդ հաստատել. եւ զՄաթէոս աւետարանչին աթոռն յԵրուսաղէմ, զի կամեցաւ զայնոք փառաւորել»²¹:

Տիեզերական եկեղեցու շրջանակներում ձևավորված յուրաքանչյուր ինքնամփոփ համակարգ պետք է ունենար ինն դասաշար, որը կարգավորում էր եկեղեցու վարչաթեմական (տեղագրական-կանոնական) և դավանաբանական պատույցը: Աքքայի բանակցությունների ընթացքում փորձ էր արվում պապական աթոռը առանձնացնել ինն աստիճանի համակարգից և ներկայացնել որպես գահագլուխ. «...ի վերայ ընթհանուր կաթողիկէ եկեղեցոյն». «Եւ ասէ. այսպէս ամենայն Պատրիարք և Կաթողիկոսք և Արծուէսք և Վէսք պարտին հնազանդ լինել աթոռոյն Պետրոսի որպէս գլխաւորի»²²: Այս դեպքում տիեզերական եկեղեցին պետք է ունենար այս ձևը.



Այս կառույցը պետք է ունենար կանոնական և դավանաբանական կազմակերպման բնույթ, որպեսզի նրանց միջոցով դրսևորվեր պապականության գերագահությունը. «Ուստի և սուրբ աթոռս Հոռովայն միայն, որպէս մայր սուրբ հաւատոյ է այն, որ տայ զհաստատութիւն տիեզերական սուրբ ժողովոցն և որ կացուցանէ զսահմանադրութիւնս, և տայ զօրէնս ամենեցուն: Վասն որոյ և սա հաստատեաց զաթոռս այլոց պատրիարգաց, և մետրոպոլի-

19 Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխատասիրություններ Խորով Թորոսյանի. Երևան, 1976, էջ 589—560.
 20 Ստեփաննոս Օրբէլեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 448.
 21 Մմբատ Սպարապետ. Գատաստանադիրք, Հավաքական տեքստը, ուսներն Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի. Երևան, 1968, էջ 65.
 22 Մխիթար Սկեռացի, էջ 23:

տայ, և Լախոսկոպոսայ, և ղայլ առաջնորդութիւնս ի կարգս Եկեղեցւոյ»²⁵։ Ի նշակես պարզ երևում է, փորձ է արվում պապականության գերագահությունը օժտել բոլոր հատկանիշներով՝ կանոնական, տեղագրական, դավանաբանական։ Հայոց Եկեղեցու կարևորագույն խնդիրներից սեկն էր ցույց տալ, որ դավանաբանական իրավասությունները յուրացվել են հետագայում և առաքելական ավանդույթի հեղինակություն չունեն։ «Ի ուր՝ զոր պատշաճ համարիչ հասկացուցէք ի պատասխանույ զիրեանք և զինչ այլ ասեն զուր՝ գրեցէք. ի սեղ բող բերեն առ մեզ զՊատրոս առաքելույն դաւանութիւն և զՍեղբեստրոսիս և զԼիսիստիանոսիս. և զՅուլիանոսիս. զայս աստուածազգեսաց արանց և առաջնորդայ խոստովանութիւն և թէ շնորհունիմք՝ յաստուծոյ առնումք զբանադրութիւն»²⁶։ «...և տայ զօրէնս ամենեցուն» հասկացությունը ենթադրում է, որ հռոմեական Եկեղեցին իրեն էր վերապահում տիեզերական Եկեղեցու դավանաբանական օրենսդրության ողջ բնագավառը։ Հետաքրքիր է, որ Եկեղեցու համընդհանրականության գաղափարի շերտ կողմնակից Սմբատ Սպարապետը ևս պապականությունը առանձնացրել է որպես առանձին դաս, սակայն նման իրավասություններով չի օժտել. «Եւ-թ. դասք աւագ եւ մեծ աւժութիւն է՝ պատրիարքն, որ է պապն։ Եւ գործ է սոցա աւժել զդասս թագաւորացն...»²⁷։ Իրենց բացառիկ իրավունք վերապահելով կողմնակից պապ (սկզբնական շրջանում այդպես էր կոչվում նահապետի եպիսկոպոսը՝ «Prima sedis», «Prima cathedrae episcopus») կաթոլիկ Եկեղեցու բարձրագույն նվիրապետները, փաստորեն, աշխատում էին հիսնարկել պատրիարքությունից բարձր կանգնած դաս։ Այս և հարանման ձգտումների դեմ հայոց Եկեղեցին մշակել էր մի շարք սկզբունքներ, որոնցից Մխիթար Սկևռացիս առաջ քաշեց հետևյալը. «...Էնդ որ յոյժ բերեալ իմ նախանձ, ասեմ. ո վ Հայր սուրբ, ոչ է ըստ օրինաց առաքելական Եկեղեցւոյ շարադրութիւնդ՝ զոր առեսս, զի զՊատրիարքն զհետ բերես առաքելական Եկեղեցւոյն, և զԿաթողիկոսն Հայոց զկնի նորա դասես։ Եւ ասա, զի սչ է պատրիարքն, ոչ քաղաքի միոյ Եպիսկոպոս, իսկ Կաթողիկոսն Հայոց՝ պէտ ազգի միոյ ողջոյն»²⁸։ Այս ենթատեքստում շեշտը դրվում է Եկեղեցու ձևավորման ոչ այնքան Եկեղեցական, որքան պատմական ավանդույթի վրա, ըստ այդմ անհրաժեշտաբար հրապարակ է գալիս երկու տիտղոսներ (պատրիարք, կաթողիկոս) ներկայացնող Եկեղեցական համակարգերի էթնո-դավանաբանական հիմքերը պարզաբանելու խնդիրը, քանզի պատրիարքությունն առաջին հերթին Եկեղեցու առանձնացել էր որպես Եկեղեցական վարչական միավոր՝ իր մեջ ընդհանրապես հոգևոր-քաղաքական և էթնիկական տարաբնույթ կառույցներ։ Հինգ պատրիարքական Եկեղեցու (Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, Երուսաղեմ) բարձրագույն հիմքում նախ և առաջ ընկած էր նրանց մայրաքաղաք լինելու հանգամանքը, քանի որ գիսավոր քաղաքի Եկեղեցին շրջակա թեմերի համար հանդիսանում էր «ecclesia matrix»։ Վերոհիշյալ հարցադրումը իր մեջ ներառում է պատրիարք-կաթողիկոս աստիճանների ընդհանրականության խնդիրը. «Դարձեալ, ընդդէր՝ կոչէք զԵկեղեցիսդ զայդոսիկ կաթողիկէ, զի կաթողիկէ առաքելական է, և առաքելականն կաթողիկէ. զի լծակիցք են և ոչ է հնար առանց միմեանց ասիլ, որպէս և թուղթքն Կաթողիկէայց։ Եւ ցուցաւ՝ զի յԱռաքելոցն ոչ ոք գոյ ի նոսա. և զի ոչ կոչէք զԵկեղեցւոյն նոցա Կաթողիկոս. և զի հարկ է առանց ամենայն հակառակութեան կաթողիկոս կոչել՝ յորմէ կաթողիկէ, և ոչ պատրիարքք, զի պատրիարքարան կոչի։ Իսկ եթէ ոչ կոչէք կաթողիկոս, և ապա ոչ կաթողիկէ. և թէ ոչ կաթողիկէ, և ոչ առաքելական ապա ընդէ՞ր իսա-

25 Կղէմէս Գալանոս. Միաբանութիւն հայոց սուրբ Եկեղեցւոյն ընդ Մեծի սուրբ Եկեղեցւոյն Հռովմայ. Հռոմ, 1650, էջ 413—414։

26 ՄՄ, ձեռ. 2268, էջ 61ա—61բ։

27 Սմբատ Սպարապետ, էջ 67—68։

28 Մխիթար Սկևռացի, էջ 66—67։

բէք զպարզամիտսն»²⁷: Այս դեպքում, ինչպես պարզ երևում է, կաթողիկոսական աթոռը չի համադասվում պատրիարքական դասաշարին, այլ կազմում է առանձին համադաս. «Երկրորդ դաս աստիճանի եկեղեցւոյ են արքեպիսկոպոսք, որ թարգմանին եպիսկոպոսապետք կամ առաջին եպիսկոպոսք...»

Ի սոյն աստիճան են կաթողիկոսք, որ թարգմանին ընդհանրականք. բայց ունին առանելութիւն պատուոյ քան զարքեպիսկոպոս՝ զի ոչ եթէ յիւր վիճակին միայն, այլ ընդ ամենայն տեղիս ուր ազգքն իւր և համացեղքն են, ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ զմիտոնն, վասն այնորիկ անուանի և կաթողիկոս»²⁸: Չնայած այս ենթատեքստում կաթողիկոսութիւնը համադասվում է արքեպիսկոպոսութեան հետ, սակայն այն իրավասութիւնները, որոնցով օժտված է, առանձնացնում են նրան որպէս առանձին դաս, քանզի «առանելութիւն պատուոյ» լրացվում է կանոնադրական արանական և տեղազրական կազմակերպման յուրահատուկ սկզբունքներով:

Հայոց կաթողիկոսի իրավահավասարութիւնները ձևավորվել էին առավելապէս էթնոտարածքային սկզբունքի շրջանակներում. «...իսկ կաթողիկոսն Հայոց՝ պէտ ազգի միոյ», մինչդեռ պատրիարքների յուրացրած իրավունքների զգալի մասը կապված է տիեզերական ժողովների հետ²⁹: Հասկանալի է, որ Արևելյան հռոմեական կայսրութեան մայրաքաղաքի եպիսկոպոսը անհրաժեշտաբար յուրացնելու էր պատրիարքի տիրոջոսի հետ կապված իրավասութիւնները. «Արդ, ուստի ասէք ունել զժայրագոյնութիւն զայն, որ ոչ միայն իշխէ զաւառաց, այլ Եփեսոսի՝ որ է ամոռ Յովհաննու սիրելի աշակերտին Տևառու. թողից զայլսն և այնքան անարգէք, մինչ զի յորժամ յափշտակի ի ձէնչ Կոստանդնուպոլիս ոչ համարիք արժան անդ նստիլ եպիսկոպոսին Կոստանդնուպոլիս...»

Արդ, զԿոստանդնուպոլիս՝ որ յետ երկու հարիւրութիւնսն է մի ամաց շինեցաւ, և այն անագան, սահմանադիրքն զիարդ կարացին խախտեցին»³⁰:

Արքայի ժողովում շոշափվող բոլոր հիմնախնդիրները այս կամ այն ձևով աղերսվում էին նաև եկեղեցու կազմակերպման ամբողջականութեան հիմնահարցին: Հայոց եկեղեցուն սովորաբար մեղադրում էին այն բանում, որ նվիրակներով թերի է, քանզի այն պատրիարք չի գլխավորում, ըստ այդմ էլ պետք է ենթարկվի որևէ պատրիարքութեան: Հարցազրման նպատակը բովանդակում էր նախ և առաջ պատմականորեն ձևավորված այն ավանդույթը, որ «...կարգաւորեաց Աստուած զսուրբ եկեղեցի ինն դասուք ըստ վերնոյն», որի յուրացումը և կիրարկումը ոչ միայն և ոչ այնքան «պատուի աղագաւ» էր, որքան գաղափարական միջավայր տվյալ աթոռի աստվածային (առաքելական) ժառանգութիւնը ժամանակի և տարածութեան մեջ հիմնավորելու համար: Հարցազրման մյուս կողմը արդեն կապված է պատրիարքական հինգ աթոռների ավանդույթի հետ: Հասկանալի է, որ հինգ պատրիարքական աթոռների տեսութիւնը առաքելական ավանդույթի հեղինակութիւն շունքը, այլ համարեցված էր եկեղեցու պատմական զարգացմանը³¹: Մխիթար Սկևռացին ևս Հայոց եկեղեցին ներկայացնում է որպէս ավարտուն կառույց. «Առաջինն՝ կաթողիկոսն Աղուանից: Երկրորդն՝ եպիսկոպոսն Սիւնեաց, զոր զկնի սորա նախապատուեցին կաթողիկոսն Հայոց: Երրորդ՝ եպիսկոպոսն Հալբատայ, որ ունի զտեղապահութիւն կաթողիկոսին Վրաց, զտեսչութիւն բոլոր Գուգարաց: Չոր-

27 Նույն տեղում, էջ 77:


28 Մխիթար Գոշ. Դատաստանագիրք, էջ 501:

29 Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատասիրութեամբ Վ. Հակոբյանի. Երևան, 1964, էջ 120--121. М. Поснов. История христианской церкви (до разделения церквей—1054 г.). Киев, 1991, с. 295.


30 Մխիթար Սկևռացի, էջ 79, 83:

31 М. Поснов. Указ. соч., с. 300.

րտրդ՝ Լսլիսկոսյոսն Ռշտունեաց և Սոկաց, որ նստի ի Տոսպ գաւառի յԱղթա-
մար կղզի»⁸², Սա հայոց կաթողիկոսութեան կազմակերպման վարչաթեմական
(տեղագրական) և կանոնադրական արանական ինքնամփոփ կառույցն է.



Այս դեպքում հայոց եկեղեցին օգտագործելով ոչ թե պատրիարք, այլ կա-
թողիկոս (ընդհանրական) անվանումը, աշխատում էր այն համապատասխա-
նեցնել շարակարգի պատրիարք դասի իրավասութիւններին. «Կոստանդին
ժառայ Քրիստոսի և շնորհօք նորին կաթողիկոս ամենայն Հայոց, օրհնութեամբ
և ողջունիւ և սիրովն Աստուծոյ՝ ծանուցանեմ լրման եկեղեցւոյդ Հայաստա-
նեայց, վիճակելոց ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Քաղէո-
սի և Բարդուղիմէոսի և մեծավաստակ նահատակին Գրիգորի և մերում կրսերու-
թեանս»⁸³, Այս բանաձևը, որը խնդրո առարկա ժամանակաշրջանում օգտագոր-
ծում էր Կոստանդին Ա Բարձրաբերդցի կաթողիկոսը, ներառում է հայոց եկե-
ղեցու ինքնամփոփութեան գաղափարը, քանզի նրան տալիս էր դրա համար
անհրաժեշտ առաջին հատկանիշը՝ առաքելական ավանդույթի հեղինակութիւն
և ժառանգականութիւն.



Անկախ այն հանգամանքից, որ վերոհիշյալ կառույցը համադասում է նվի-
րապետութեան զարգացման տարբեր փուլերի ավանդներ, կարևորն այն է, որ
չորս աթոռն էլ ներկայացնում են Մեծ Հայքը: Այս մոտեցումը նախ և առաջ
ցույց էր տալիս կաթողիկոսութեան ձևավորման էթնոտարածքային և եկեղեցա-
քաղաքական հիմքերը: Անկախ XIII դարի II կեսին ձևավորված իրավիճակից,
երբ հայոց եկեղեցական կառույցում մեծ դեր էին խաղում նաև Հայաստա-
նից դուրս ստեղծված թեմերը (Տարսոն, Միս, Կեսարիա), Մեծ Հայքի շորս
աթոռները մնում էին կաթողիկոսութեան կազմակերպման կենտրոնում, քան-
զի նրանց հիման վրա էր ձևավորվել «Կաթողիկոս Հայոց» տիտղոսը: Եթե վե-
րոհիշյալ կառույցը խնդիր ուներ ցույց տալու հայոց եկեղեցու ինքնամփոփու-
թեան գաղափարը, ապա այն պետք է լրացվեր նաև այլ հատկանիշներով, ո-
րոնք համադասվում են «Ամենայն Հայոց Կաթողիկոս» հասկացութեան շուրջ.

⁸² Մ խ ի թ ա ր Ս կ ե ո ս թ ի, էջ 67—68:

⁸³ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 301:

Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հայոց. էթնո-տարածքային. դավանաբանական

Կաթողիկոս. Կանոնադավանաբանական գերագահություն

Ամենայն Հայոց. էթնո-դավանաբանական և կանոնական համընդհանրականություն

Հայոց եկեղեցական կառույցի նման ընկալումը պատահական չէր և ուղղված էր հունական ու կաթողիկ եկեղեցիների ներկայացրած մեղադրանքների դեմ. «Եթէ ասեն Յոյնք և Հռովմայեցիք՝ որպես յառաջագոյն և այժմ՝ ցՀայս, թէ դուք որով պարծիք մայրաքաղաքաւ, կամ ո՞ր եկն առ ձեզ երկոտասանիցն, զի ասէք զձեզ հաւասար մեզ. զի որ եկն առ ձեզ յառաքելոյն Խաղէոս՝ յեօթանասնիցն և ոչ յերկոտասանիցն է, և դուք անազան ուրեմն դարձայք ի Քրիստոսս, և ոչ զհետ մեր: Առ որս ասասցուք նախ, թէ մեք ոչ պարծիմք մայրաքաղաքաւ, զի աշխարհական է...

Սու գոր ասէքդ՝ զԹագէոս յեօթանասնիցն գոլ, զայգ ոչ յառաքելական մատենաց ասէք՝ ուստի տրամաբանութիւնս մեր, այլ ի վիպասան պատմագրաց»⁸⁴,

Աքքայի ժողովի ընթացքում, ի տարբերություն Կիլիկյան Հայաստանի քաղաքական որոշ շրջանակների, որոնք տրամադրված էին որոշ զիջումների, Հռովմայի կաթողիկոսարանը որևէ զիջում անելու ցանկություն չցուցաբերեց, քանզի տիեզերական եկեղեցու միասնության հարցում տարակարծիք էր, և դատում էր, որ եկեղեցու գլուխ ոչ թե Հռոմի պապն է, այլ Քիրստոսը, ըստ այդմ էլ այն ներկայացնող համակարգերը հավասարազոր են: Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ Հայոց կաթողիկոսարանը աշխատում է միջեկեղեցական հարաբերությունները հնարավորին չափ զերծ պահել քաղաքական հիմնախնդիրներին ծառայելու նկատառումներից: Բանակցությունների ընթացքում պարզորոշ երևում էր տիեզերական եկեղեցու կառույցի ձևի շուրջ երկու հակոտնյա դիրքորոշումների առկայությունը: Պապականությունն աշխատում էր ստեղծել միակենտրոն ուղղահայաց համակարգ, մինչդեռ հայոց կաթողիկոսարանը փորձում էր պահպանել հորիզոնական կառույցը:

ВОПРОС О ПЕРВОПРЕСТОЛИИ НА СОБОРЕ В АККРЕ (1263 г.)

ГАГИК АРУТЮНЯН

Резюме

После долгих разногласий и споров в рамках вселенской церкви сформировалось несколько независимых самостоятельных церквей, и поэтому вопрос о ее единстве составлял основу межцерковных отношений. В исследуемое время основным носителем идеи единства и поборником этой политики выступало папство, стремившееся подчинить себе остальные престолы. Вследствие этого вселенская церковь получила бы моноцентричную вертикальную структуру. Проблема единства церкви

⁸⁴ Մ խ ի Թ ա Ր Ս Կ Լ ո ս ց ի, էջ 84—85:

рассматривалась на соборе 1263 г. в Аккре, где представители римской церкви стремились достичь признания со стороны армянской церкви верховенства папства. В ходе переговоров армянская церковь не проявила желания пойти на какие-либо уступки, ибо считала, что главой церкви является не папа, а Христос, и по сему, системы, представляющие ее, равноправны.

THE PROBLEM OF THE SUPERIORITY OF THE OECUMENICAL
THRONES AT THE ACCRA COUNCIL IN 1263

GAGIK HARUTYUNYAN

Summary

Several independent churches had been united within the Oecumenical Church after long disagreements and arguments. The problem of its unity was the principal point in the interrelations of the Churches. At that time the main bearer of the idea of the unity and policy was the papistry, trying to subordinate all the other thrones. As a result the Oecumenical Church would have monocentric and vertical structure. The council at Accra in 1263 was devoted to the problem of the unity of the Church, and the representatives of the Roman Church strived to make the Armenian Church to accept the priority of the papistry. The Armenian Church did not go to any compromise during the negotiations. It considered that the head of the church was not the pope but Christ and therefore all the Churches should possess equal rights.